«ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ի մշակման, ներդրման ծառայությունների մատուցման եվ «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ից օգտվելու համար իրավունքի գնման պայմանագիր N2016/01

ք. Երևան «15» մարտ 2016թ.

ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Մ. Պողոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու, որը միաժամանակ հանդիսանում է Օգտվող), մի կողմից, և «ԼՍՈՖՏ» ՍՊ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Լալայանի (այսուհետ՝ Կատարող, որը միաժամանակ հանդիսանում է Տրամադրող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ի մշակման և ներդրման ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 գնման ժամանակացույցի պահանջների համաձայն:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3.Կատարողի կողմից մշակված և ներդրված «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Կատարողին: Սույն Պայմանագրով Կատարողը տրամադրում է Պատվիրատուին «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ից օգտվելու համար իրավունք:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին և N 2 հավելվածով նախատեսված Գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ, և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև՝ 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և Գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.5 և 4.6. կետերում նշված ժամկետների խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ամսական վճարը Պատվիրատուի կողմից չվճարելու դեպքում Կատարողը կասեցնում է «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ից օգտվելու համար իրավունքի տրամադրումը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայության արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցներ.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Կատարողի կողմից մատուցման ենթակա «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ի մշակման և ներդրման Ծառայության գինը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

4.2.Պայմանագրի 1.3. կետի համաձայն՝ «ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»-ից օգտվելու համար իրավունքի ամսական վճարը կազմում է 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

4.3. Պայմանագրի 4.1. և 4.2. կետերում նախատեսված գումարները ներառում են Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Պայմանագրի 4.1. և 4.2. կետերում նախատեսված գումարները կայուն են, և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու դրանք:

4.4. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության և օգտվելու համար իրավունքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.5. Պայմանագրի 4.1. կետով նախատսված դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարումից:

5.8. Կատարողը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների արդյունքի այն թերությունների համար, որոնք առաջացել են Պատվիրատուի մեղքով՝ Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի ոչ հավաստիության հետևանքով կամ Պայմանագրով նախատեսված պարտավորության չկատարման հետևանքով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Ծառայությունների մատուցման հետ կապված՝ Կողմերը միմյանց կարող են տրամադրել գաղտնի տեղեկատվություն, փաստաթղթեր և այլ նյութեր:

7.2. Տվյալ Պայմանագրում գաղտնի տեղեկություն ասելով նկատի է ունեցվում ցանկացած տեղեկություն (գիտատեխնիկական, տեխնոլոգիական, արտադրական, ֆինանսա-տնտեսական կամ այլ, այդ թվում՝ տեղեկատվության պաշտպանության և նույնականացման/իսկության միջոցների, ավտորիզացիայի (մուտքանուն, գաղտնաբառ և այլն), վիճակագրական, Պատվիրատուի կամ Կատարողի հաճախորդների մասին տեղեկություններ, ապրանքների, ծառայությունների, հետազոտությունների արդյունքների վերաբերյալ Կատարողի գնային քաղաքականության և այլն), որը տրամադրում է մի Կողմից մյուս Կողմին ցանկացած ձևով (բանավոր, գրավոր, էլեկտրոնային և այլն), որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և որը Պատվիրատուի կողմից նշված է որպես գաղտնի (այսուհետ՝ Գաղտնի Տեղեկատվություն):

7.3. Կատարողը և Պատվիրատուն պարտավորվում են չբացահայտել և/կամ որևէ երրորդ անձանց չփոխանցել և/կամ այլ նպատակներով, քան սահմանված է Պայմանագրով, չօգտագործել միմյանց որևէ Գաղտնի Տեղեկատվություն, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կամ Կողմերի կողմից նախնապես գրավոր համաձայնեցված դեպքերի:

7.4. Անկախ սույն գլխի այլ դրույթներից՝ Կողմերն իրավասու են բացահայտել գաղտնի տեղեկատվությունը,

ա) եթե դա պահանջվում է, և այն չափով, որով այն պահանջվում է՝ ցանկացած համապատասխան իրավասության օրենսդրությամբ,

բ) եթե դա պահանջվում է, և այն չափով, որքանով գաղտնի տեղեկատվությունը դարձել է հանրամատչելի ոչ մյուս Կողմի մեղքով:

7.5. Կողմերը պարտավորվում են պահպանել նույնպիսի խիստ նախազգուշական միջոցներ Գաղտնի Տեղեկատվության պահպանման նպատակով, ինչպիսիք ողջամիտ չափով կպահպանեին իրենց սեփական Գաղտնի Տեղեկատվության նկատմամբ:

7.6. Կողմերը պարտավորվում են Գաղտնի Տեղեկատվության բացահայտման վերաբերյալ փաստերի հայտնաբերման կամ կասկածների առաջացման դեպքում հնարավորինս արագ, բայց ոչ ուշ, քանի 3 (երեք) օրում միմյանց ծանուցել այդ մասին և անհապաղ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ցանկացած հետագա բացահայտման կանխման ուղղությամբ:

7.7. Երրորդ անձանց Գաղտնի Տեղեկատվության բացահայտման կամ փոխանցման ներքո նկատի է ունեցվում Կողմերի (նրանց պաշտոնատար անձանց, աշխատողների, գործընկերների) կողմից ցանկացած դիտավորյալ և ոչ դիտավորյալ ծանոթացում երրորդ անձանց (կլինի դա ֆիզիկական, թե իրավաբանական անձ) տվյալներին, որոնք համարվում են որևէ Կողմի Գաղտնի Տեղեկատվություն՝ ցանկացած ձևով, ներառյալ բանավոր և գրավոր, ծանոթացում տրամադրված փաստաթղթերի բնօրինակներին կամ դրանց պատճեններին կամ քաղվածքներին՝ ներառյալ ընդհանրացումները:

7.8. Կողմերի կողմից տրամադրված տեղեկատվության արտահոսքի կամ գաղտնիության խախտման հայտնաբերման դեպքում, մյուս Կողմի կողմից կարող է սահմանվել պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի կողմից պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Կողմերի կողմից պարտավորությունների մասնակի չկատարման կամ Պայմանագիրը ամբողջությամբ լուծելու համար Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև Պայմանագրին կից յուրաքանչյուր տարի կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի պայմանների փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.4 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.5 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Պայմանագիրը կազմված է 11 (տասմեկ) էջից, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 , N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի 1 (մեկ) օրինակ:

8.7 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.8 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ արդարադատության նախարարության	
Դատական ակտերի հարկադիր	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
կատարումն ապահովող ծառայություն	ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ք. Երևան, Հալաբյան 41ա	ՀՎՀՀ 01202055
ՀՎՀՀ 01223338	ՀՀ 24100023278500
Գանձապետարան N1 900013288023	«Յունիբանկ» ՓԲԸ
----------	----------
Մ. Պողոսյան	Լ. Լալայան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«15» մարտի 2016թ կնքված
N 2016/01 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
Ստեղծել հնարավորություն ծրագրային միջոցներով ներբեռնել web-service -ից ԴԱՀԿ-ի կողմից իրականացվող տվյալներ Client-Treasury համակարգ	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	*Ավարտը*
2016թ. մարտի « »	2016թ. դեկտեմբերի 25

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ արդարադատության նախարարության
Դատական ակտերի հարկադիր
կատարումն ապահովող ծառայություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Գանձապետարան N1 900013288023

Մ. Պողոսյան

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
ՀՀ 24100023278500
«Յունիբանկ» ՓԲԸ

Լ. Լալայան

Կ.Տ.

Հավելված 2
«15» մարտի 2016թ կնքված
N 2016/01 ծածկագրով գնման պայմանագրի

«ԴԱՀԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼ»-Ի ՄՇԱԿՄԱՆ, ՆԵՐԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ «ԴԱՀԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼ»-Ի

Գնման ժամանակացույց

Հազար դրամ

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Միավորի նախահաշվային գինը (դրամ)	Նախատեսվում է գնել 2016թ.								Ընդամենը	
				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
1	ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»	դրամ		2	3070	3	210	3	210	3	210	11	3700
Ընդամենը			X	X		X		X		X		X	3700.0

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Գանձապետարան N1 900013288023

Մ. Պողոսյան
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
ՀՀ 24100023278500
«Յունիբանկ» ՓԲԸ

Լ. Լալայան Կ.Տ

Հավելված 3
«15» մարտի 2016թ կնքված
N 2016/01 ծածկագրով գնման պայմանագրի

«ԴԱՀԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼ»-Ի ՄՇԱԿՄԱՆ, ՆԵՐԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ «ԴԱՀԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼ»-Ի

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

Հազար դրամ

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2016թ. պետական բյուջեից, ընդորում												Ընդամենը
		Հունվար	փետրվար	մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	
1	'ԴԱՀԿ վճարումների ներմուծման ավտոմատացված մոդուլ»			3070	70	70	70	70	70	70	70	70	70	3700.0

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ք. Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Գանձապետարան N1 900013288023

---------- Մ. Պողոսյան
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ՀՎՀՀ 01202055
ՀՀ 24100023278500
«Յունիբանկ» ՓԲԸ

---------- Լ. Լալայան Կ.Տ

Հավելված 4.
«15» մարտի 2016թ կնքված
N 2016/01 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
ՀՀ _____	ՀՀ_____
_____	_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված Տեխնիկական բնութագրերին և Գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ վճարման ժամանակացույցի)
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«15» մարտի 2016թ կնքված
N 2016/01 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 (երկու) օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

«ԴԱՀԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՄՈԴՈՒԼ»-ԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Ի ԼՐՈՒՄՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N2016/01

ք. Երևան «29» դեկտեմբերի 2016թ.

ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Հարությունյանի (այսուհետ՝ Պատվիրատու, որը միաժամանակ հանդիսանում է Օգտվող), մի կողմից, և «ԼՍՈՖՏ» ՍՊ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Լալայանի (այսուհետ՝ Կատարող, որը միաժամանակ հանդիսանում է Տրամադրող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին:

1. Սույն Համաձայնագրով Կողմերը փոփոխություն են կատարում 15.03.2016թ-ին կնքված **N2016/01** Պայմանագրի 8.1 կետում, շարադրելով հետևյալ կերպ՝ «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով»:
2. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև 15.03.2016թ-ին կնքված N2016/01 Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն Համաձայնագիրը կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:
4. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած տարաձայնությունները և վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ արդարադատության	
նախարարության Դատական ակտերի	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ
հարկադիր կատարումն ապահովող	ք. Երևան, Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
ծառայություն	ՀՎՀՀ 01202055
ք. Երևան, Հալաբյան 41ա	ՀՀ 24100023278500
ՀՎՀՀ 01223338	«Յունիբանկ» ՓԲԸ
Գանձապետարան N1 900013288023	
Ա. Հարությունյան	Լ. Լալայան
Կ.Տ.	Կ.Տ.